

**ՄԱՐԴՆ ՈՒ ԿՆԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Մի մարդ ու մի կնիկ են ըլլում, սրանք ունենում են մի տղա: Օրերի մի օր էս կնիկը հիվանդանում ա, մարդին կանչում ա, ասում ա.— Ա՛յ մարդ, էս մեռնում եմ, դու առանց կնիկ մնալ չտես, կնիկ դես առնիլ: Իմ աջու կուռը կկտրես, պատիցը կախ կանես, վեր իմ բեխին ծեծի, կասես՝ իմ աջու կոնովը ծեծի: Դու էլ վեր կնիկ առնես, շեկից, քաչալից, քոռից հեռու կմնաս, մեկելներից ում կուգես, կառնես:

Անց ա կենում մի երկու օր, էս կնիկը մեռնում ա, մարդը սրա աջու կուռը կտրում ա պատիցը կախ անում:

Տարին անց ա կենում, սա գնում ա կնգա յա ման գալի, վերդի գնում ա, իրա կնգա ասած կնանիքն են ռաստ գալի: Էս խեղճի ճարը վեր կտրվում ա, մի շեկ կնիկ ա առնում, բերում: Էս կնիկը մարդին շատ ա սիրում, հարգում, պատվում, համա բեխի հետ յոլա չի գնում: Մարդը վեր տենում ա սա միշտ բեխի հետ կովով ա խոսում, մի օր էլ ասում ա. — Ա՛ կնիկ, եփ վեր էդ բեխի վրա շատ կջղայնանաս, հրե հա իրան մոր աջու կուռը պատիցը կախ արած, էն շորի տակին, նրանով կծեծես:

Էս կնիկը ինչքան էն կոնով ծեծում ա, էնքան բեխեն ուժվանում ա, վեր տենում ա էլ ճար չկա, մարդին ասում ա.— Բեխեդ շատ ա ինձ նեղցնում:

Ասում ա.— Ա՛ կնիկ, էդ քոռփա բեխեն քեզ ի՞նչ ա անում:

Կնիկը վեր շատ մարդին բողոքում ա, մի օր էլ հերը բեխին նստցնում ա գոքումը, ասում ա.— Բալա ջան, խի՞ ես մորդ ծեծել:

Ասում ա.— Հայրիկ ջան, դու էլ հվատում ես, բա էս կարա՞մ նրան ծեծեմ, հրե հա՛ էն պատից կախ արած կոնովը ինքն ա ինձ ծեծում ամեն օր:

Կնիկը վեր տենում ա՝ մարդը գալիս ա ամեն օր առաջ բեխի հետ ա խոսում, նոր իրեն, մի օր էլ բերում ա լավաշ ա թխում, շատ բարակ ու չոր, փոքր ա տեղի տակին: Մարդի տուն գալու վախտը մոտանում ա թե չէ՝ վրեն պառկում ա ու սկսում «վա յ, վա յ, վա յ» անիլը:

Մարդը գալիս ա, ասում ա.— Էդ խի՞ ես պառկել:

Ասում ա.— Տղեդ էնքան ինձ ծեծեց, վեր սկռռնիս խրդրփշուր ա ըլել:

Մոտանում ա տղին ասում ա.— Բալա ջան, խի՞ ես մորդ ծեծել:

— Հայրիկ ջան՝, էս նրան ծեծել չեմ, նա յա ինձ ծեծել:

Ասում ա.— Այ կնիկ, դու ասում ես՝ նա յա ծեծել, նա ասում ա՝ դու ես ծեծել, բա էս ի՞նչ անեմ:

— Չգիտեմ, կամ կտանես կկորցնես, կամ էս կգնամ կկորչեմ:

Էս կնիկը տհե էնքան մարդի տեղը նեղում ա, վեր մի օր էլ ըիզնադեմ ձին նստում ա, տղին դնում գոքին ու գնում քոլի խորքումը վեր գալի, նստում ա մի ծառի տակի, բեխի գլուխը դնում չոքին ու տհե էնքան մընում, մինչև բեխեն քնում ա: Քնում ա թե չէ՝ կամաց գլուխը դնում ա գետնին ու թողում գալի տուն:

Քշերվա կիսին բեխեն զարթնում ա, տենում ա մենակ ա՝ գոռում ա, լաց ա ըլլում, նրա լացի ձենին մի օխտը գլխանի դն գալիս ա տանում:

Էս դևը տղին բերում ա պալատ, ասում ա.— Տղա՛, էս երկու հրեղեն ձի ունեմ, մընի անմը Տուֆ ա, մընինը՝ Ռաշ: Ռաշին կես չանաղ չամիչ կտաս, Տուֆին՝ մի չանաղ, էս յոթ օր, յոթ քշեր կոխվ եմ գնում:

Դևի գնալուց եղը Ռաշը լիզու ա առնում ու խոսում ա, ասում ա.— Տղա՛, դա ինձ ու քի ուտիլ տի, Տուֆին պահիլ տի: Ես ինչ վեր ասեմ, դու լավ լսի, ինձ մի չանաղ տու, Տուֆին՝ կես չանաղ:

Ասըմ ա.— Հլա մատդ էլ տար կոխի սմավարի տրուբեն, բեր փթաթի, վեր գա ասի՝ էդ ի՞նչ ա, ասա՝ չամիչ տալիս տեղը Տուֆը կծեց:

Տղեն մատը կոխում ա սմավարի տրուբեն վառում ու փթաթում:

Դեր գալիս ա, ասըմ ա.— Էդ ի՞նչ ա ըլել:

Ասըմ ա.— Տուֆն ա կծել:

Դրա հմա դեր փետը վեր ա առնում Տուֆին լավ ծեծում ա:

Տուֆը դնին ասըմ ա.— Անտեղի ինձ ծեծեցիր, բայց վերջը կփռո՞մանես:

Դնի գնալուց եղը Ռաշը տղին կանչում ա, ասըմ ա.— Տղա, ի՞նչ ասեց քեզ:

Ասեց.— Էքուցվանից Տուֆին էրկու չանախ կտաս, Ռաշին՝ մի:

Ասըմ ա.— Դու հակառակը կանես: Հմի էլ կգնաս գլուխդ կկոխես էն պղինձը:

Տղեն գնում գլուխը կոխում ա էն պղինձը, ձեռաց մագերը վեսկի ա դառնում:

Ռաշը տղին ասըմ ա.— Պատրաստվի՛, վեր մենք տասը օրից եղը փախչիլ տենք, թե չէ՝ նա մեզ կուտի:

Վեր դեր կռվից գալիս ա, Ռաշը ասըմ ա.— Տղա, գլուխդ փթաթի, ասա մեկ գլխիս ա քացի տվել, վեր նա էլ նրան լավ հալից քցի:

Դեր իմանում ա ու փետը վեր ա ունում Տուֆին լավ թակում ա:

Տուֆը ասըմ ա.— Դու վերջը կփռո՞մանես, բայց ու՛շ կլի:

Ռավետը դեր տղին կանչում ա, ասըմ ա.— Ես յոթ օրով կռիվ եմ գնում, Տուֆին իրեք չանաղ չամիչ կտաս, Ռաշին՝ էրկու:

Ռաշը ասըմ ա.— Տղա՛, հակառակը կանես, ինձ օրեկան իրեք չանաղ չամիչ կտաս, Տուֆին՝ էրկու:

Անց ա կենում մի քանի օր, Ռաշը տղին ասըմ ա. — Տղա՛, մենք պետք ա փախնենք, վեր էկավ տեհավ ըստի ենք, մեզ կուտի: Հետդ վե կալ մի աման ձեթ, մի կիլո աղ, մի սանդղ, ինձ էլ թամքի, գնա տես կարաս դռները բացես:

Տղեն գնում ա թե չէ, դռները բացվում են:

Ասըմ ա.— Տղա՛, դե ինձ նստի, հենց պլետ տու, վեր տեղիցը կաշին վեկենա, վախես վեչ հա՛, ես ծուլ կլիմ, կթոչեմ, դու պինդ կպի միջկիցս, վախես վեչ:

Տղեն նստում ա, սրանք գնում են, մեկ էլ դեր գալիս ա տենում ա մարդ չի կա, գլխի ա ըլում, վեր նրանք փախել են:

— Տո՛ւֆ,— ասըմ ա,— ես քեզ մատաղ, շուտ արա, ինձ հասցրու Ռաշին:

Ասըմ ա.— Վենց հասցնեմ, դու ինձ ջարդ ու փշուր ես արել ու նրան միշտ շատ ես չամիչ տվել, ինձ՝ քիչ:

Ռաշը տղին ասըմ ա.— Տղա՛, դու միշտ եղ մտիկ արա, վեր տենաս դեր գալիս ա, ինձ իմաց արա:

Դեր Տուֆին լավ ուտցնում ա ու նստում քշում:

Ռաշը տղին ասըմ ա.— Տղա՛, մտիկ արա, տես գալիս չե՞ն:

Տղեն ասըմ ա.— Հրե մի բան ա բևում:

Ասըմ ա.— Տղա՛, սանդղը եղնեդ գցի:

Տղեն սանդղը գցում ա, դառնում ա ցաքոտ, փշոտ, փուշը քրքրում սրան, չորս կողմից արուն ա թափում:

Մխելիցը եղը տղեն մտիկ ա անում, ասըմ ա.— Հրե՛, մոտանում են:

Ասըմ ա.— Տղա՛, աղը քցի:

Սա աղը քցում ա թե չէ, սրա շունը սկսում ա մոմռալ:

Ասըմ ա.— Հրես մոտանում են:

Ասըմ ա.— Տղա՛, միե՛լ ձեռքը քցի:

Վեր ձեռքն էլ վրա ա անըմ, մի ծով ա առաջանըմ, մի կողմը դնն ու Տուֆն են, մի կողմն էլ Ռաշն ու տղեն:

Դեր ասըմ ա.— Տուֆ ջան, ինձ էս լիճը անցկացրու:

Ասըմ ա.— Վենց անցկացնեմ, էն վեր դու իմ գլխին տվիր, էնքան ջարդեցիր, ես էլած ուժս կորցրի:

Դեր տղին ասըմ ա.— Տղա՛, դու վե՛նց անց կացար:

Ասըմ ա.— Ես Ռաշին թարս նստեցի, անց կացա: Դու էլ Տուֆին թարս նստի, անց կաց:

Դեր Տուֆին թարս նստում ա քշըմ հլե գալիս ա ծովի կեստեղը թե չէ, ծովը եղ-եղ ա գնըմ, սրանք իջնում են ծովի տակը, ծովը նորից գալիս ա միանըմ, ու դրանք խեղդվում են:

Ռաշը ասըմ ա.— Տղա՛, ըսօրեց եղը դու ազատ ես, իմ պոչիցը մի փունջ մազ պոկի դի ծոցումդ, հենց որ տեղդ, նեղ կլի, էդ մազը կծխես, ես քեզ օգնության կհասնեմ:

Տղեն մի փունջ մազ ա պոկըմ դնըմ ծոցումը, իրար պաչըմ են, իրարից բաժանվըմ:

Ըստիան գնըմ ա մի չոբանի կուշտ, մի ոչխար ա առնըմ, մորթըմ, ուտըմ, դառինն էլ դնըմ ա գլխին ու ճամփա ընկնըմ, թե ուր՝ աստոծ գիտի:

Հասնըմ ա մի թագավորի հող, գալիս ա էդ թագավորի կուշտը, իրան գլխի էկածը պատմըմ ա ու խնդրըմ ա, վեր մի գործ տա, աշխատի, ապրի:

Էս տղեն սկսըմ ա դրանց միար բաղմանչութին անիլը: Թագավորին իրեք աղջիկ ա ունենըմ, դրա փոքր աղջիկը տղի վեսկու մազերը բրավուրդ ա անըմ:

Ասըմ ա.— Սա շատ շնորքով տղա կլի, քանի ուրշնին առել չեն, ես առնեմ:

Մի օր քվորտանցը ասըմ ա.— Մեր մարդի գնալու վախտն ա, մեր հերն էլ իսկի մտածում չի, բերեք մեր հորը հսկըցնենք, թե մենք մարդի գնալ ենք ուզում: Տենանք նա ի՞նչ կպատասխանի: Սրանք իրեք ձմերուկ են դրգըմ, ամենքի միջին մի դանակ: Մինը՝ մաքուր հասած ա, մինը՝ կեսը հասած, կեսը՝ դեղնած, էն մինն էլ նոր սկսել ա հասնիլը:

Թագավորը նեղանըմ ա ծառայի վրա, ասըմ ա.— Էս ի՞նչ ես բերել:

Ասըմ ա.— Խի՞ ես նեղանըմ, էս քո ըղչկերքն են դրգել, էս՝ մեծն ա, էս՝ միջնակը, էս էլ՝ փոքրը, ասըմ են. «Մենք ուզում ենք ամուսնանաք»:

Թագավորը ասըմ ա.— Կանչեցեք, ամենքին մի խնձոր տվեք, հանեցեք վերի հարկը, թող բոլոր ջահելնին գան անց կենան, ով ում իրա խնձորը կտա, նրա հետ կփսակենք:

Էրկու աղջիկը տալիս են իրանց հոր դաքի մինիստրների տղերանցը, պուճուր աղջիկը պահըմ ա, մնի էլ ա տալիս չի:

Ասըմ են.— Էս ի՞նչ պահեց, էլ մարդ մնա՞ց:

Ասըմ են.— Չէ՛, բաղմանչի քաչալն ա մնացել:

Գնըմ են նրան էլ են բերըմ: Պուճուր ախյիկը իրան խնձորը տալիս ա դրան: Թագավորը ըխչկա վրա նեղանըմ ա, էս էրկու փեսին լավ ընդունում ա, քաչալին ու պուճուր աղջկանը հվանոցն ա տալի:

Օրերի մի օրը թագավորը հվանդանըմ ա, բժշկնին մտիկ են անըմ, ասըմ են.— Սրա դեղը առյուծի կաթն ա:

Ասըմ են.— Բա ո՞վ կբերի, ով չի բերի՞լ:

Էն էրկու փեսենին ձեն չեն հանըմ:

Էս քաչալը կնգանը ասըմ ա.— Գնա հորդ ասա, մի ձի էլ, մի թվանք էլ տա ինձ՝ գնամ բերեմ:

Հերը բանի տեղ չի դնըմ, ասըմ ա.— Նա դի՞ ինձ հմար դեղ բերի՞լ, վեր ես սղանամ:

Էս ու էն կոնիցը ասըմ են.— Թաքավեր ջան, թող գնա էլի, բալի հլե բերըմ ա:

Թագավորը ասըմ ա.— Դե էն կաղ ձին էլ, էն թվանքն էլ տվեք, թող նա էլ գնա:

Տղեն էդ ձիուն նստում ա գնում գեղիցը դուս, ձորի միջին թողում, ծոցի մազը հանում ու կպցնում, Ռաշը իրան թամբովը գալիս ա կողքին կաղնում: Տղեն նստում ա ու քշում, գնում առյուծի կաթ բերում, ճանապարհին էն էրկու փեսենին պտահում են, սրան ճանաչում չեն:

Ասում ա.— Վե՛ր տեղ եք գնում:

Ասում են.— Գնում ենք առյուծի կաթը բերենք:

Ասում ա.— Ինձ ունեմ, ի՞նչ կտաք ձեզ տամ:

Ասում են.— Ի՞նչ ես ուզում:

Ասում ա.— Ամենքիդ տոզին մի պեչատ խփեմ:

Մհանք ասում են.— Ո՞վ պտի իմանա, թող խփի, մենակ մեզ կաթ տա:

Վերու էծի կաթը տալիս ա սհանց ու ամենքի տոզին մի պեչատ ա խփում, ճմփու դնում:

Ինքը առյուծի կաթը բերում ա, տալիս ա թագավորին, սա խմում ա, լավանում ա:

Անց ա կենում մի քանի վախտ ուրիշ թագավեր էս թագավերի վրա կռիվ ա գալի: Սա իրա փեսենուն գենք ու գորք ա տալի՝ դրըզում կռիվ, բաղմանչուն բանի տեղ չի դնում:

Բաղմանչին կնգանն ասում ա.— Գնա քու հորը ասա, թող ինձ էլ գենք տա, ես էլ գնամ կռիվ:

Աղջիկը գալիս ա հորը ասում ա.— Իմ մարդին էլ գենք տու, թող նա էլ գնա կռիվ:

Հերը ասում ա.— Նհանք ի՞նչ արին, որ քու մարդը ինչ անի:

Մհել ասում ա.— Դե լավ, ընգի մի թվանք ու մի ձի ա մնացել, էն էլ տվեք նրան:

Սա էս ձին ու էդ թվանքը տանում ա սարի քմակին պահում, ծոցիցը Ռաշի մազը հանում ա վառում: Ռաշը իրան սարք ու կարգովը գալիս ա, նստում ա ու քշում ընգնում էդ գորքի մեջը՝ ջարդում, փշրում, հա հաղթում, մին էլ վիրավորվում ա կոնիցը: Թագավերը իրան աղլուխը հանում ու դրա կուռը կապում ա:

Սա նորից ձին քշում ա սրանց մեջը, նհանք վեր տենում են՝ էլ կարում չեն կռիվ անեն, թող են անում, փախչում: Էս թագավերի գորքը ուրախ-ուրախ գալիս ա տուն: Տղեն ձին քշում ա, անց կենում սարի քմակը, պոչիցը մազ ա պոկում ու բաց թողում: Թագավերը գալիս ա տուն, լավ քեֆ են սարքում, ուրախութիւն անում:

Էս տղեն էլ բեզարած գալիս ա ու քնում: Աղջիկը տենում ա հոր յաղլուխը հրես մարդի կռանը կապած, գալիս ա հորը ասում ա.— Քո յաղլուխը դու ե՞ս տվել իմ մարդին, հրե կուռը յարալու ա էլել ու քու յաղլուխովն էլ կապած ա:

Հերը գալիս ա տենում ա, վեր իրան կապած, փաթաթածն ա, նոր սա ըստի գլխի ա ըլում, վեր սա իրան փեսեն ա ըլել:

Տղին կանչում ա քեֆի, նստցնում սեղանի կլիսին, օխտը օր ուտում, խմում, քեֆ են անում:

Էդ կերութումից եղը, բերում ա պալատի կեսը տալիս ա էս փեսին, սրանց նորից հրքսանիք ա անում: Նոր տղեն ըտի պատմում ա, վեր էն առյուծի կաթն էլ ա ինքը պիրել, էն մեկել փեսենու պիրած կաթը վերու էծի կաթն ա ըլել, ինքն ա տվել, հլա նհանց քամակներուն էլ մի-մի պեչատ խփել:

Թագավորը պիրում ա փեսին դնում իրան տեղը, ասում ա.— Ես պռավել եմ, ըսօրեց եղը երգիրը դու էս կառավարելու: Իրեք խնձոր վեր ընգավ, մինն՝ աստղին, մինը գրողին, մինն էլ անգաճ դնողին: